

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2

23.07.2021թ. կնքված N «ՀՄԱԱՇՁԲ-2021-1-ԴԲԳԳԿ» գնման պայմանագրում փոփոխություններ
կատարելու մասին

ք. Երևան
«25» 10.2021թ.

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Մ.Ս.Բիշարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ե.Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 23.07.2021թ. կնքված N «ՀՄԱԱՇՁԲ-2021-1-ԴԲԳԳԿ» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 21.10.2021թ.-ին ներկայացրած գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 23.07.2021թ. կնքված N «ՀՄԱԱՇՁԲ-2021-1-ԴԲԳԳԿ» գնման պայմանագրում կատարել փոփոխություններ աշխատանքների ծավալների համադրման վերաբերյալ (Հավելված 1), որոնք միասին գումարային արտահայտությամբ չեն գերազանցում պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը, ինչպես նաև սկզբնական նախահաշվով նախատեսված ծավալների նկատմամբ առանց նախագծային փաստաթղթերի փոփոխության փաստացի կատարված աշխատանքների ճշգրտման վերաբերյալ (Հավելված 1)՝ անփոփոխ թողնելով պայմանագրի արժեքը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 3 (երեք) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ <<Դատաբժշկական Գիտագործնական
Կենտրոն>> ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ.Հերացի 5/1

Գանձապետարան

Հ/Հ 900018001975

ՀՎՀՀ 00405431

Տնօրեն Մ. Ս. Բիշարյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Նուբարաշեն

11փ./21/26,

Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 11500374479000

ՀՎՀՀ 01232586

Տնօրեն Ե. Գևորգյան

(ստորագրություն)

Կ.Տ